

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԶՎԱՐԹՆՈՑ

ԵՐԵՎԱՆ 1967

302.6(47.925)

13038

3-44 Гимназия
Гимназия.

ՀԱՅԿԱՆԻ ՍՈՒՐԵՆԻԱՑԻ ԱՊԵՏԵՐԻ ԿԵՑ ԶԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ԴՈՒՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀՈՒՆԴԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՊՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԵ

Վ. ՀԱՐԻՄՅԱՆՅԱՆ


902.6(Կ7.925)
Հ - 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

A 346611

Հ Յ Ա Յ Թ Ե Ո Ց

СИГНАЛЬНЫЙ
ЭКСПЕДИТЕР



ՀԱՅԿԱՆԻ ՍՈՒՐԵՆԻԱՑԻ ԱՊԵՏԵՐԻ ՀԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՎԱՆԻ

947

Խմբագիրներ՝ Ար. Աղաբարյան
Ս. Երեմյան

Վ. ԱՐՅՈՒՆՅԱՆ

Յ Վ Ա Ր Տ Ի Ն Ծ

(На армянском языке)

Երևան, 1947 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Զվարթնոց տաճարը հին հայկական ճարտարապետության ամենահանրածանոթ հուշարձաններից մեկն է։ Նա հայանի է մեր ռեսպուբլիկայի և Միության սահմաններից էլ դուրս։

Ամեն տարի այն տեսնելու են գալիք հազարավոր աշխատավորներ, բազմաթիվ էքսկուրսաններ և տուրիստներ Սովետական Միության տարբեր քաղաքներից ու արտասահմանից։

Զվարթնոցը ինչպես Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի, այնպես էլ մոտակա շրջանների բնակչության կուլտուրական հանգստի սիրված տեղն է, որը ամեն կիրակի հոգ բազմությամբ հավաքվում է նրա ավերակների մոտ։

Դեպի հուշարձանը տածած օրըստորէ աճող հետաքրքրությունը ստիպեց Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեին գետն 1938 թվին, կջմիածնի շրջանի հուշարձանների մասին մի ուղեցույցը հրատարակել (Յ-ըդ պրակ)։ Սակայն այդ ուղեցույցը վաղուց սպառված է և, բացի այդ, նրա մեջ Զվարթնոցի մասին եղած համառոտ տեղեկությունները հազիվ թե բավարարեն այժմյան ընթերցողին։

Այդ հանդամանքը պահանջում էր Զվարթնոցը այցելող լայն հասարակության համար հրատարակել մի հանրամատչելի գիրք՝ Զվարթնոցի կառուցման պատմությանը և հուշարձանի ճարտարապետությանը ծանոթացնելու նպատակով։ Հուսով ենք, որ այս գիրքը կկարողանա կատարել այդ համեստ, սակայն միանգամայն կարենոր գիրը։

Ընթերցողներից խնդրվում է գրքի մասին եղած դիտողությունները հայտնել Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեին (Երևան, Սվերդլովի փ. № 2)։

Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտե

ՃԱՆԱՊԱՐՀԸ

Երեսանից մեքենան դուրս է գալիս մի խումբ էքսկուր-
սանտներով, որոնք ցանկանում են դիտել Սովետական Հայաս-
տանի նշանավոր հուշարձաններից մեկը—Զվարթնոց տաճարի
ավերակները: Նա անցնում է Հրազդան (Զանգու) գետի խոր ու
գեղահետիլ ձորի վրա ձգված «Հաղթանակ» կոչվող նոր կամուր-
ջով: Այս հոյաշեն կամուրջը կառուցվել է Հայրենական Մեծ Պա-
տմաբաղդի օրերին և բացվել երթևեկության համար գերմանական
գավթիչների գեմ տարած հաղթանակի օրը:

Այնուհետև ճանապարհը ոլորապտույտ անցնում է խաղողի
և այլ այգիների միջով: Շուրջը փարթամ կանաչ է ու Արա-
րատյան դաշտի լայնաբարակ տարածությունը:

Երբ օրը պարզ է, ծառերի արանքից, երկնքի լազուր ֆո-
նի վրա, առանձնանում են հավերժական ձյան աղամանդներով
փայլվուն Մասիսի հոյակալ գագաթները:

Ահա վերջանում են այգիները, ճանապարհը մի փոքր իջնում
է, գիմացը, հարթավայրի վրա, Զաֆարաբադ գյուղն է: Ճանա-
պարհի ձախ կողմում, Հրազդանի հանդիպակաց ափին, երեսում է
Ուրարտական Կարմիր-Բլուր ամրոցը, սիհնագարյան Կավակերտ
(ուրարտ. Թեյշեբային), որն այժմ սիստեմատիկորեն պեղվում
է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կողմից: Գեղուց-
ները Հայաստանի պատմության մ. թ. ա. 7-րդ դարին վերա-
բերվող նոր էջեր են բացում: Երեսում են ամրոցի բուրգավոր
պարիսպների մնացորդները և Ուրարտական փոխարքայի պա-
լատի պատերի մնացորդները—հրդեհից մերկացած ու կարմրած:

Մեքենան անցնում է Զաֆարաբադ գյուղը: Ճանապարհից
ոչ հեռու երեսում է մի աշտարակ, դա 12—13-րդ դ.դ. մուսուլմա-
նական ճարտարապետության գամբարան-հուշարձանն է:

Հետևում մնաց Փարաքար գյուղը: Նորից այգիներ, նորից
փարթամ բուսականություն:

Ակսում է ճանապարհի առավել գեղեցիկ մասը: «Արարատ»
տընտի խաղողի այգիների մոտ ճանապարհն անցնում է ուղիղ

գծով: Նրա երկու կողմից բարձր բարեկեց բարդիննը են: Շուրջը փռված են խաղողի այգիների ընդարձակ տարածություններ, որոնք աճել են Սովետական իշխանության տարիներին, նախկին առաջարների վրա: Այստեղ հասունանում են խաղողի ամենաբազման ու ամենալավ տեսակները—Արարատյան դաշտավայրի բերքառատ հողի պտուղը: Խաղողի այդ տեսակներից պատրաստված գինիներն ու կոնյակը մեծ հոչակ են վայելում նույնիսկ մեր Միոթյան սահմաններից դուրս:

Այժմ այս ճանապարհի երկու կողմերում, բարդիների հովանու տակ, կառուցված են մենատներ: Այդ տներում ապրում են տուաշին իմակերիալիստական պատերազմից հետո, գեռես երեկ ամբողջ աշխարհում դեգերող, հայրենադարձ մեր եղբայրները—Սովետական Հայաստանի նոր քաղաքացիները:

Ոլորտից հետո ճանապարհը սկսում է բարձրանալ և ապա նորից ուղղվել: Ճանապարհի ձախ կողմում կանգնած է ծառերով շրջապատված մի տաղավար, այս Զվարթնոց տանող ճանապարհի սկիզբն է: Տաղավարի մոտով ճանապարհը թեքվում է դեպի ձախ: Նորից ճանապարհի ուղիղ սահքն է՝ երկու կողմից շարված ծառերով: մեքենան անցնում է բարեկեց բարդիների միջով: Ճանապարհի ուղիղ դիմացը կանգնած է դեղատեսիլ Մասիսը: մի պահ կարծես ճանապարհը տանում է դեպի նա: Բայց այդ միայն թվում է: Ահա երեսում է ավերակները շրջապատող պատը: Ճանապարհը թեքվում է դեպի աջ և մեքենան կանգ է տանում ավերակների գարպասի գեմը գտնվող փոքրիկ հրապարակում: Էքսկուրսանտներն իջնում են:

ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

Դիսես կես գար առաջ, ավերակները ծածկված էին հողի հաստ շերտով, որոնք ըլլուրներ կազմած բարձրանում էին շուրջը փռված հարթավայրի նկատմամբ: Տեղ-տեղ հողի միջից դուրս էին ցցված շինությունների անձեւ մնացորդները:

Ժողովուրդը սչինչ չի հիշատակում այս ավերակների մասին, եթե չհաշվենք հայ պատմիչների վկայությունները: Սա հաղվածյուտ դեպք է, եթե մենք ոչ մի ժողովրդական առասպել չունենք ավերակների մասին: Դա կարելի է բացատրել նրանով, որ Զվարթնոցը որպես գործող եկեղեցի գաղարել է գոյություն ունենալուց համարյա մեկ հաղարամյակ սրանից առաջ:

Առաջին անգամ Զվարթնոցի ավելակների պեղումները ձեռնարկեց Խաչիկ վարդապետ Դադյանը 1900 թվականի մայիս ամսին, Խուսաստանի կայսերական հնագիտական հանձնաժողովի թույլտվությամբ: Չորս տարվա ընթացքում ավելակների ողջ տեղիտորիսան մաքրվեց հողից ու շինարարական ազգից, որի շնորհիվ դիտության համար և բոլորին ի տես բացվեցին Զվարթնոց ատամարի ու սրա հարավ-արևելյան կողմը գտնվող Ներսես Յ-րդ կաթողիկոսի պալատի մասցորդները (նկ. 1):

Այդ ժամանակից ի վեր Զվարթնոցը, որպես հին-հայկական ճարտարապետության մեծագույն հուշարձան, դարձավ Հայաստանի տեսարժան վայրերից մեկը:

ԶՎԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԸ

Կան ճարտարապետական ստեղծագործություններ, որոնք արտացոլում են իրենց դարաշրջանի առավել արտահայտիչ գըծերը, որոնց մեջ կարծես հանրագումարի են բերված դարաշրջանի հիմնական նվազնություններ:

Այսպիսի ստեղծագործություններ քիչ են: Այսպիսիք սովորաբար խորը հետք են թողնում, դառնում են հետագա սերունդների ոգեշնչման աղբյուր, հետզհետեւ տարածելով իրենց հղոր ազդեցությունը:

Այդ տեսակետից ճարտարապետության ոչ մի հուշարձան տայնուես չի բնորոշում հայ ժողովրդին, նրա կուլտուրան, նրա ստեղծագործական ավյունը, ինչպես Զվարթնոց տաճարը—հայկական ճարտարապետության այդ լավագույն երկերից մեկը:

Զվարթնոց տաճարում խտացված է հայ ժողովրդի, գեռես Յ-րդ դարում սկսված, հզոր կուլտուրական վերելքը: Այդ վերելքը սերտորին կապված է հայոց գրերի գյուտի հետ (404-406 թվականներին), որը վճռական գեր կատարեց ժողովրդի ստեղծադործական ուժերի հայտնաբերման և զարգացման գործում:

Աղջային ինքնուրույնության ու անկախության համար հայ ժողովրդի մղած հետագա պայքարը է՛լ ավելի նպաստեց հայկական աղդային ճարտարապետության վերջնական կազմավորմանը, որի աժենանշանավոր ժամանակաշրջանը հանդիսացավ Յ-րդ դարի առաջին կեսը:

Զվարթնոց տաճարը այդ աննախընթաց վերելքի ավարտումն է, որը որպես մի մոռնումենտ կանգնեցրել է դարաշրջանը ի

Նշանավորումն Հայաստանում 5—7-րդ դ. դ. կուլտուրայի բնագուշակում ձեռք բերված վիթխարի նվաճումների:

Դարերի ընթացքում տարածվել է նրա հզոր ազդեցությունը, վերակենդանանալով նոր ձևելով ու պրտահայտությամբ: Նրա բարեծին ու վեհ ձեռքը այժմ էլ կարող են քննադատորնեան օգտագործել նոր ճարտարապետության համար՝ վերածնված հայ ժողովրդի ճարտարապետությունը կերտելիս:

Սուրբ Գրիգոր կամ Զվարթնոց տաճարը կառուցել է Կաթողիկոս Ներսես 3-րդը (641—661), որն իր նշանավոր շինարարական գործունեության համար ստացել է «Եինող» մականունը:

Զվարթնոց տաճարի շինարարությանը ժամանակակից, 7-րդ դարի հայ պատմիչ Սեբեսոց հիացմունքով է խոսում այդ նշանավոր ստեղծագործության մասին: Ստորև բերում ենք Սեբեսոցի վկայությունը Զվարթնոց տաճարի կառուցման մասին:

«Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն՝ որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին, յորում ասեն, ընդ առաջ եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երկւեալ ի տեսլիան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն: Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովիք եւ շընադ զարմանալեաւք, արժանի աստուածային պատույն որում նույրեացն: Ած. ջուր եւ երեր զեղետոյն եւ արկ ի զործ զամենայն վայրսն առապար, տնկնեաց այգիս ևւ ծառատունկս, եւ շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն զեղեցկադիք յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս աստծոյ»: (Սեբեսոս եպիսկոպոս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1912 թ. էջ 192—193):

«Եյն ժամանակ հայոց կաթողիկոս Ներսեսին միտք հղացավ հաստատել իր բնակատեղին սուրբ եկեղեցիների մոտ, որոնք գտնվում են Վաղարշապատ քաղաքում, ճանապարհի վրա, որտեղ ասում են, զիմավորեց Տրդատը սուրբ Գրիգորիս: Կառուցեց նաև այնտեղ մի եկեղեցի երկնավոր Զվարթնոց անվամբ, որոնք երեացել էին սուրբ Գրիգորին տեսիլքի ժամանակ երկնավոր զինվորների (հրեշտակների) բազմության կերպարանքով: Եվ կառուցեց եկեղեցին բարձր կառուցվածքով և հրաշակերտ գեղեցկությամբ, արժանի աստվածային պատվին, որին նվիրված

է: Զուր բերեց զետից և պիտանի գարձրեց բոյոր առավար վայրերը, անկեց այզի և ծառատռւնկեր և շրջափակը զարդարեց գեղեցկաշն ընակարաններով, պատելով բարձր՝ պարսպով ի փառս աստծու:

Հաջորդ գարերի պատմիչները — Կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերոցին, Ասողիկը (Ստեփանոս Տարոնացին) և ուժիշները նույնպես հիացմունքով են խոսում Զվարթնոց տաճարի և նրա ճարտարապետության մասին:

Քաղաքական այն ձգտումները, որոնք թելագրեցին Ներսիս Յ-րդին կառուցելու Զվարթնոց տաճարը և նրան կից պարագը մեկուսացած հայ եկեղեցու օրբան էջմիածնից, սերտորեն կապված հն նրա քաղկեդոնական ձգտումների հետ: Այդ հոսանքը, որը դիմավորում էր ինքը, հետափնդում էր եկեղեցու միջոցով Հայաստանի և Բյուզանդական կայսրության մերձեցմանը, ձգուելով այդ երկու երկրներին դաշնակից գարձնել: Ըստգեմ թուլացող Սասանյան Պարսկաստանի և Մերձավոր Արեւելքում ուժիղացող նոր, անեղ թշնամու— Արարական խալիֆաթի:

Պատմական տվյալները վկայում են քաղկեդոնականություն պատմաստելու Ներսիս Յ-րդի անհաջող փորձերի մասին, և Հայաստանի իշխան ու սպարապետ Թեոդորոս Ռշտունու (641—658) կողմից գլխավորած հայ հոգեորականության և նախարարների ուժեղ օպոզիցիայի մասին ընդգեմ այդ հոսանքի:

Բյուզանդական կայսր Կոնստանդին 2-րդը (642—668), որը 652 թվին գալիս է Հայաստան հատուկ քաղաքական նպատակով, հայերի վզին կայսերական եկեղեցին — քաղկեդոնականությունը փաթաթելու, անհետևանք փորձերից հետո վերադառնում է Կոնստանդնուպոլիս: Նրանից հետո, վախճանալով հակառակ տրամադրված հոգեորականության ու նախարարների հետապնդումներից, Ներսիս Յ-րդը ստիպված է լինում առժամանակ թողնել կաթողիկոսական գահը և հեռանալ դեպի իր ծնընդավայրը Իշխան Պյուղը (Մամիկոնյան իշխանների աթոռանիստը Տայք նահանգում), հանձնարելով շինարարության ավարտումը հայոց ապագա կաթողիկոս Անսաստասին:

Մի այլ պատմիչի — Մովսես Կաղանկատվացու վկայության հրմտն վրա կարելի է եզրակացնել, որ Կոնստանդին 2-րդ կայսեր Հայաստան գալու ժամանակ, այսինքն 652 թվին, Զվարթնոց տաճարի կտորուցումը ավարտված է եղել:

Բնչպես պատմիչն է վկայում, Կոնստանդին 2-րդ կայսրը, որը ներկա էր տաճարի օծման արարողությանը, այնքան է հիշացած եղել նրա գեղեցկությամբ, որ հրամայել է տաճարը կառուցող վարպետին հետեւ իրեն դեպի Կոնստանդինուպոլիս, որպեսզի իր մայրաքաղաքն էլ զարդարի նույնպիսի տաճարով:

Սակայն նրա ցանկությունը չի կատարվում, որովհետև կառուցողը (որի անունը պատմիչը չի հիշատակում) ճանապարհին վախճանվում է:

Այս վկայությունն ընդհանրապես արժունի է ուշադրության: Պետք է ենթադրել, որ Կոնստանդին 2-րդ կայսեր գալու ժամանակ տաճարի կառուցումը հիմնականում ավարտված էր, ուստի Սեբաստիոնի տեղեկությունները այն մասին, թե Ներսես 3-րդը հանձնարարել է իր փոխանորդ Անաստասին շարունակել շինարարությունը, վերաբերվում է միայն Կաթողիկոսարանի շինարարությանը և թերեւ տաճարի շինարարության վերջնական ավարտմանը: Դժվար թե կատարվեր տաճարի օծման արարողությունը, առանց ավարտելու նրա կառուցումը:

Մյուս կողմից էլ Մովսես Կաղանիկատվացու վկայությունը կարող է հիմք ծառայել առարկելու մի քանի գիտնականների ոչ ճիշտ գրույթների գեմ, որոնք են ներսես 3-րդի բյուզանդասիրության փաստից, Զվարթնոցի ճարտարապետության մեջ տեսնում են Բյուզանդական ճարտարապետության ուժեղ ազգեցություն:

Ներսես 3-րդը, մինչև իր վեհ մտահղացման իրականացման ձեռնարկելը, 641 թվին, այդ գարաշը հայության հայաստանի մայրաքաղաք Դվինում, կառուցում է սուրբ Սարգսի եկեղեցին: Մի ուրիշ եկեղեցի էլ նա կառուցում է Խոր-Վիրապում: Տարակույս չի կարող լինել որ տեղափոխելով իր աթոռը Դվինից և սկսելով Զվարթնոցի կառուցումը, նա այդ գործին մասնակից է անում իր ճարտարապետությամբ և հոյակապ կառուցվածքներով փառաբանված Դվին քաղաքի ճարտարապետներին ու վարպետներին: Անտարակուսելի է նաև, որ Զվարթնոցի կառուցման ժամանակ, շատ բան փոխ է առնված այն ժամանակ դեռ ծաղկում ապրող մայրաքաղաքի ճարտարապետությունից:

Այս բանը հաստատվում է Դվինի պեղումներից, որը կատարվել է 1937—1939 թ. թ. ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Փիլիալի (այժմ Հայկական ՍՍՌ Գիտություն-

ների Ակադեմիա) Պատմության ինստիտուտի կողմից և վերսկսվել 1946 թվից:

Պեղությունը ցույց տվին, որ Դվինի ճարտարապետությունը իր ազգեցությունն է ունեցել Հայաստանի ճարտարապետության վրա, նույն թվում նաև Զվարթնոցի վրա:

Դվինում հայանաբերվեցին նախքան Զվարթնոցը կառուցված շինություններ, որոնց ճարտարապետական դետալները շատ հարազատ են Զվարթնոցի դետալներին:

Այն փաստը, որ Անդրկովկասում Զվարթնոցի տիպի չորս (թերեւս հինգ) տաճար է կառուցվել, այնինչ Բյուզանդական ճարտարապետության մեջ այս տիպին անմիջապես մոտ կանգնած ոչ մի կառուցվածք հայտնի չէ մեզ, կարող է իրավունք տալ պնդելու, որ Զվարթնոցի ճարտարապետական կերպարը տեղական, անզրկովկասյան է և ոչ ներմուծված: Ռավեննայի ավիտալի, ս. Սոփիայի որոշ զբարգներ և մի շարք այլ կառուցվածքներին վերագրվող նմանությունը Զվարթնոցի տիպին այնքան հեռավոր է, որ գժվար է անմիջապես կապ սահմանել նրանց և վերջինիս միջն:

Տեղափոխելով իր աթոռը Դվինից, Ներսես Յ-րդը ամենայն հավանականությամբ, շատ եռանդ և կարողություն է գործադրել, որպեսզի իր կողմից ստեղծված հայ եկեղեցու նոր կենտրոն Զվարթնոցը իր ճարտարապետությամբ ոչ միայն գերադանցի մինչ այդ կառուցված տաճարների ճարտարապետությանը, այլ և իր մինչ այդ չտեսնված մի շենք, իր կոմպոզիցիայով ու հանդուրու մտահեղացմամբ:

Կարելի է ամենայն իրավումը ասել, որ նա իր տաղանդավոր ճարտարապետների ու հմուտ վարպետների օգնությամբ, փայլուն կերպով կատարեց այդ խնդիրը:

Արարատի հավերժական դագավեների ֆոնի վրա տաճարը կանգնած էր որպես Հայկական ճարտարապետության նույնպիսի հավերժական մրնում հնտալ մի երկ:

Զվարթնոց տաճարը լինելով հայ եկեղեցական ճարտարապետության նոր տիպ, Հայաստանում վաղօրոք ստեղծված կենտրոնագմբեթ տիպի եկեղեցիներից փոխ է առել նրանց հիմնական ներքին ձևը— հավասարակողմ խաչը: Մակայն այդ խաչը, քրիստոնեական կրոնի սիմվոլը՝ այսուղ ներգծված է ոչ թե ուղղանկյան մեջ, ինչպես էցմիածնի, Ավանի, Հայփամերի և այլ տաճարներում, այլ կլոր, գրսից բազմանիստ ձեի մեջ (նկ. 2):

Այդ խաչը կազմում է երեք կիսաշրջանաձև գասավորված սյունաշաբթերից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է վեց սյունիրից (նկ. 3): Խաչի արեւելյան կողմը, ներքեփ մասում, ամբողջական պատ է եղել, որը, ինչպես ցույց են տվել պեղումները, ծածկված է եղել խճապատկերով (մողակիա) և որմնանկարներով: Հատակագծում կիսաշրջանաձև գասավորված սյունիրը պատկան է ին զամբյուղահյուս խոյակներով (նկ. 4):

Խաչի կիսաշրջանաձև կողմերի միացման տեղերում կանգնած էին հզոր սույթեր (նկ. 5): Յուրաքանչյուր մույթի հետեւ մասում գեղի արտաքին պատի կողմը, կանգնած է եղել մեկական սյուն, որոնք պատկան էին Հայկական Փեղուական պետության զինանիշը արտահայտող թեատարած արձվաքանդակ խոյակներով (նկ. 6): Այդ չորս սյուները, շրջանի մի ներգծված խաչի կիսաշրջանաձև թերերի միջին մասերի հետ միասին, կազմում էին տաճարի երկրորդ հարկի (յարուսի) պատերը պահող կլոր հիմքը:

Ներսում, արեւելյան կողմից, գտնվում էր տաճարի սեղանը, որոշ բարձրություն ունեցող հարթակով, որի վրա, հարավային կողմից, կառուցված էր քարե ամբիոն: Դեպի այդ բարձրացիք հարթակը պահում էին երեք քարյա սանդուղքներ, մեկը կենտրոնում, իսկ երկուսը աջ և ձախ կողմերում: Պահպանվել է այս հարթակի միայն հարավային մասը՝ սանդուղքով և ամբիոնի մեջը:

Դեպի հարթակը տանող կենտրոնական սանդուղքի առաջ, տաճարի հատակում գտնվում է մկրտելու կլոր քարե ավագանը, որտեղ իջնում են մի քանի քարե աստիճաներ:

Ներսի կիսասյուները և նրանց միացնող կամարները իրենց վրա կրում էին տաճարի երեսը հարկը կազմող զմբեթն ու թշմբուկը: Այսպիսով Զվարինոց տաճարը իրենից ներկայացնում էր եռահարկ կենտրոնագմբեթ մի կառուցվածք, որը 7-րդ դարի Հայաստանի ճարտարապետության համար միանդամայն նոր և յուրահատուկ մի ձև էր (նկ. 7): Բացառիկ հարուստ էր հարդարված տաճարի արտաքին բազմանիստ պատը, ինչպես այդ վկայում են պահպանված ճարտարապետական բեկորները: Այստեղ ճարտարապետը ցույց է տվել իւ տաղանդի ողջ ուժն ու սանդադրժական կարողությունը: Երտաքին պատի յուրաքանչյուր կողը մշակված է եղել կիսասյուներով (նկ. 8), որոնց վրա հենցում էր գեկորատիվ կամարը խորը պրոֆիլավորված կամարադե-

դով (նկ. 9): Այսպիսով ամեն մի կողին լնկնում էր մի զույգ կիսայուն: Կամարագեղների վերեի տարածությունը մշակված էր խաղողի և նռան ու նըանց ձյուղերի մոտիվներից կազմված բացառիկ հարուստ կերտած բարձրաքանդակներով (նկ. 10 և 11), որոնք լավ նկարված են և հանդիսանում են Հին Հայաստանի ռեալիստական արվեստի նմուշներց՝ սերտորեն կտակված ժողովը դի կյանքի և զրադաշնորհի հետ: Այդ քանդակները պերճախոս կերպով վկայում են Զվարթնոցի շինարարների հնարամության ու ճաշակի մասին:

Կամարագեղների հանդիպման տեղում առաջացած եռանկյունների մեջ քանդակված են մարդկային ֆիգուրներ ձեռքներին շինարարական գործիքներ: Նըանցից ոմանք կրոնական հագուստ ունեն (նկ. 12, 13): Ամենայն հավանականությամբ սրանք Զվարթնոցը կառուցող ճարտարապետների և վարպետների պորտրետներն են: Այդ քարերից մեկի վրա փոբագրված է «Յոհանն անունը, որը ենթագրվում է, որ Զվարթնոցի ճարտարապետի անունն է»:

Բարձրաքանդակ գոտուց վեր, առաջին հարկի յուրաքանչյուր նիստը մեկական կլոր լուսամուտ ուներ, որոնց միջոցով՝ լուսավորվում էր վերին սրահը: Այդ լուսամուտները արտակարգ հարուստ սելիֆ կլոր շրջապատկներ են ունեցել (նկ. 14, 15):

Երկրորդ և երրորդ հարկերի պատերը նույնպես մշակված են եղել գեկորատիվ կամարներով: Որմանակամարների օրնամենտները ներկայացված են բազմաթիվ հետաքրքրական վարիանտներով՝ որոնց գլխավոր մոտիվը են խաղողի ողկույզները և այլ բույսերը: Քիվը զարդարված է գործվածքաձև քանդակով (նկ. 16): Զարդացնում է կոմպոզիցիայի հարստությունը, բազմազանությունն ու հմտությունը, ինչպես նաև օրնամենտների քանդակի նրբությունը: Տաճարի բազմանիստ պատերին դրսի կողմից տեղափորված դեկորատիվ կամարաշարը որմանայուների հետ միասին, մետրական բաժանման էին ենթարկում ողջ ծավալը, նպաստելով նրա խոյանքին: Պատը ներսի կողմից հարդարված էր մեկական որմանայուներով (նկ. 17):

Այսպիսով տաճարն ուներ եռահարկ, ուղղաձիր առանցքի շուրջը խիստ կենտրոնացած միամնական մի ծավալ, որի ուրվագիծը նրան հոյակապ ու մոնումենտալ տեսք էր տալիս: Այս տպագորությունը ուժեղանում էր նաև նրանով, որ տաճարը դրված էր բարձրագիր մի բազմանկյուն պատվանդանի վրա, որն ավելի էր բարձրացնում և ընդգծում տաճարի ուրվագիծը:

Բոլոր կողմերից դեպի տաճարն էին տանում պատվանդանի լայն աստիճանները, որոնց մի մասը տեղ-տեղ պաճպանվել է մինչև օրս:

Զի կարելի խոսել Զվարթնոցի մասին, առանց հիշատակելու ականավոր գիտնական, ճարտարապետ Թորոս Թորամանյանի անունը, որի խորը ուսումնասիրությունների հետեանքով Զվարթնոց տաճարի ճարտարապետական պատկերը՝ մատչելի դարձավ բոլորին:

1904 թվին Թորամանյանը ձեռնամուխ է լինում նոր պեղված Զվարթնոց տաճարի չափագրությանը:

Բացված ավերակներն ու բազմաթիվ բեկորները մանրամասն ուսումնասիրելուց ու չափագրելուց հետո, Թորամանյանը կատարում է տաճարի վերակազմությունը, նախապես ներդնելով մանրակրկիտ ու մեծ աշխատանք:

Մեծագույն ուշադրությամբ էր դիտում Թորամանյանը յուրաքանչյուր բեկոր, ձգտելով գտնել նրանցից ամեն մեկի տեղը: Սկսելով վերակազմությունը տաճարի առանձին մասերից, նա հետզետե հանգեց ամբողջական կերպին, թղթի վրա վերականգնելով Զվարթնոց տաճարի նախկին տեսքը՝ եռահարկ, կենտրոնագմբեթ կոմպոզիցիայի ձևով (նկ. 7), Թորամանյանի կազմած Զվարթնոց տաճարի վերակազմության նախագիծը առաջացրեց մի քանի գիտնականների ու մասնագետների հռանդուն առարկությունները, սակայն համոզված լինելով իր գործի ճշտության մեջ, Թորամանյանին շուտով հաջողվում է համոզելնաև ուրիշներին:

Ն. Մառի զեկավարությամբ կատարվող Անիի պեղումների ժամանակ, 1905—1906 թվերին, հայտնաբերվեցին այսպես կոչված Գագկաշեն եկեղեցու ավերակները: Այս եկեղեցին, որը պահպանվել էր Զվարթնոցից համեմատաբար լավ վիճակում, ըստ ժամանակակից պատճիչ Ասողիկի (Ստեփանոս Տարոնացի) վկայության, կառուցված է եղել 10-րդ դարում Գագիկ Առաջին Բագրատառունի թագավորի կողմից (989—1020 թ. թ.), Զվարթնոցի ձևով ու համարյա նույն չափերով: Գագկաշենի պեղումների ժամանակ գտնվեց նաև Գագիկ Բագրատունի թագավորի արձանը՝ ձեռքերում ըռնած իր կառուցած եռահարկ եկեղեցու մողելը:

Այս բանը փայլուն կերպով ապացուցեց Թորամանյանի հնթագրությունը Զվարթնոց տաճարի կոմպոզիցիոն ձևի մասին:

Զվարթնոց տաճարի կյանքը երկարատն չի եղեւ Երբ Գագիկ Առաջին Բագրատունին կառուցում էր իր եկեղեցին Անիում, Զվարթնոցն արդեն ավերակ էր:

Զվարթնոցի կարճակեցությունը բացարձում է մի քանի՛ կոնստրուկտիվ պակասություններով, որոնք պատճառ դարձան ոչ միայն Զվարթնոցի կործանման, այլև այդ տիպի մի շարք ուրիշ տաճարների, ինչպիսիք էին Ներսես 3-րդի կողմից 7-րդ դարում իր հայրենի հշխան գյուղում կառուցված տաճարը, 10-րդ դարում Անիում կառուցված Գագկաշենը (նկ. 18, 19) և Բանայի տաճարը, կառուցված վրաց թագավոր Ատրներսեհի (888—923) կողմից (նկ. 20 և 21):¹

Զվարթնոցի ճարտարապետությունը հսկայական ազդեցություն է ունեցել Հայաստանի հետագա ժամանակների ճարտարապետության վրա: 7-րդ դարի երկրորդ կեսում կառուցված հռչարձանները (Թալինի մհծ տաճարը, Արուճի տաճարը և Եղվարդ գյուղի մոտ գտնվող բազմաբարիք եկեղեցին), կառուցված իշխան Դրիգոր Մամիկոնյանի (661—684) կողմից և մի շարք այլ կառուցվածքներ, չնայած որ զգալիորեն տարաբերվում են Զվարթնոցից իրենց տիպով, այնուամենայնիվ Զվարթնոցի ճարտարապետական ձևերի ուժեղ ազդեցությունն են կրում:

Հետագա ժամանակներում էլ հայ ճարտարապետության ծաղկման նոր շրջաններում՝ Բագրատունիների օրոք և հետո, ամենուրեք նկատվում է այն խորը հետքը, որը թողել է Զվարթնոցի ճարտարապետությունը: Այս բանը դրսեփորվում է կամ Զվարթնոցի² ձևերի անմիջական վերաբռնությամբ (Գագկաշեն), կամ Զվարթնոցի ապահովությամբ կերտած նոր ձևերով (Անիի և Փրկիչի և Հովհի եկեղեցիները, Խծկոնքի եկեղեցիները և այլն): Չնայած նրան, որ Զվարթնոցն այժմ ավերակ է, սակայն այս վիճակում էլ նա չի դադարում ազգել իր ուժով, բարձր կուլ-

¹ Վերջին աարիների ընթացքում Ազբեկ. ՍՍՌ Լիկիթ բնակավայրի մաս, Բախտալը կոչված տեղում, պեղութների հետևանքով բացվել է մի եկեղեցական շենքի մնացորդ, որն իր հաստակագծային ձևով որոշ նմանություն ունի Զվարթնոցին: Այս հուշարձանի հնագիտական հետազոտությունները դեռևս ավարտված չեն: Կառուցման ժամանակն անհայտ է: Այս Բախտալը Մովսես Կաղանկատվացու մոտ հիշված Բախտալան է, որտեղ 7-րդ դարում նատում էր Աղվանից եկեղեցու ութը եպիսկոպոսներից մեկը:

առերայով և ճարտարապետական ձեերի արտակարգ հարստությամբ ու պլաստիկությամբ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ

Ներսիս Յըղի պատքիւարքարանը գտնվում է Զգաբժնոց տաճարի անմիջապես մոտը, նրա հարավարհմտյան կողմում: Դա հին Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության կարևորագույն հուշարձաններից մեկն է, որը ցավոք սրբի պահպանվել է ուսումնասիրության համար ոչ այնքան մատչելի վիճակում: Զնայած որ պալատի հատակագիծը հնարավոր է լրիվ կարդար բայց նրա նախկին ճարտարապետական կերպի վերաբարպրությունը որոշ չափով գժվարություն է հարուցում, որովհետեւ այդ շնչքին պատկանող գետալները (հթե Հնաշվենք սյուների մի քանի խարիսխները և այլ բեկորները) համարյա չեն պահպանվել (նկ. 1, 22):

Կաթողիկոսի պալատն ունեցել է երկու թե (արևելքից դեպի հյուսիս) գասավորված ուղղիղ անկյանը, որոնց միջև անցնում էր միջանցք: Պաշտոնական մասը՝ ընզունելությունների դահլիճները՝ գտնվում էին հյուսիսային թեում: Այստեղ եղել են երկու դահլիճ, մեկը գասավորված արևմուտքից դեպի արևելք, մյուսը՝ հյուսիսից դեպի հարավ:

Երկու դահլիճները միմյանց կից էին և հաղորդակցվում էին գոնով: Արևմուտքից գեպի արևելքը ուղղված դահլիճն իր ճարտարապետությամբ տարբերվում էր երկրորդից (երկրորդ դահլիճը պայմանաբար անվանենք սյունաղարդ): Առաջին դահլիճի երկու ընդերկայնական պատերն ունեն երեք՝ ելուստներ՝ անտային պատերի ձևով: Այդ ելուստները, որոնց հիմնական նպատակն է եղել կրծատել թռիչքը՝ ծածկը հեշտացնելու համար, շատ էֆեկտիվ կերպով մասնաւում էին դահլիճի ընդերկայնական պատերը՝ գոյացնելով առանձին խորշեր, որոնց հատակը փոքր ինչ բարձր էր դահլիճի հատակից: Ամենայն հավանականությամբ պատերի այդ ելուստները միմյանց հետ միացվում էին թաղային ծածկով, իսկ դահլիճի մեջտեղի երկայնական մասը ծածկված էր ընդհանուր գլանային թաղով: Փոքր բարձրությամբ պահպանված դահլիճի պատերը հնարավորություն են տալիս գաղափար կաղամբերը մերւ դահլիճի ներքին տեսքի երբեմնի հանդիսավորության ու գեղեցկության մասին:

Առաջին դահլիճին կից, անմիջապես նրա հյուսիսային

կողմից, գտնվում են երկու մեծ սենյակներ, միջանցքով միմյանց
միջև: Այսուհետև այդ սենյակներին կից են եղել մի շարք շած-
րադիր սենյակներ՝ հովանաբար տնտեսական նշանակությամբ:
Առաջին դահլիճի հորավարը մուտքայուն անկյան կողմը կային երեք
փոքր սենյակներ, նույնպես օժանդակ կարիքների համար: Եթե
տռաջին դահլիճը եղել է սեղանատուն, ապա շատ հավանական
է, որ հիշված սենյակներից մեկը ծառայել է կերպակուր պատրաս-
տելու, մյուսը՝ ամաններ լվանալու համար:

Սենյակներից մեկի արտաքին պատի մեջ պահպանվել են
գեղի գուցոք թեքություն ունեցող երկու անցք, որոնց միջով
դուրս են թափում կեղտոտ ջրերը, հավանական է նաև, որ
այս սենյակը եղել է տուալետի սենյակ և պատի միջի անցքերը
ծառայելիս են եղել լվացարանների ջուրը դուրս թափելու¹¹
համար:

Սյունաղարդ դահլիճի ընդերկայնական ուղղությամբ (հյու-
սիսից գեղի հարավ) երկու շարքով դաստիրված են եղել չոր-
սական սյուներ, որոնց խարիսխներն են միայն պահպանվել: Սյունաղարդ դահլիճի արեմտյան պատի մի մասը և ողջ հարա-
վային պատը չեն պահպանվել: Սրենելյան պատը, ամենայն հա-
վանականությամբ միմյանց հետ կամարաշարքով կապված մույ-
թերի շարք է եղել: Հետագայում մույթերի արանքները շարվել
է: Ինչ վերաբերում է դահլիճի ծածկին, ոժվար է նրա մասին՝
որոշակի բան անել: Թերևս այդ ծածկը եղել է վայացաւ որը
հնագում էր սյուների վրա: Այս գեղություն, քարի խարիսխների
վրա կարող էին դրված լինել վայտե սյուներ:

Ինչպես ենթադրում են, կաթողիկոսարանի արենելյան թե-
գում դասավորված են եղել տաճարը սպասարկող հոգևորական-
ների լիցերը և անտեսական սենյակներ:

Արենելյան թեկի ամբողջ երկարությամբ — հյուսիսային կողմից
եղել են լոջիաներ կամարաշարով, կամարաշարը գուրս էր գալիս
զեպի, տաճարի մոտը գտնվող երապարակը՝ նրա հարավային
կողմից: Պահպանվել են կամարաշարի սյուների մասսիվ խարիսխ-
ները և հատակագծում խաչի ձև ունեցող մույթերի մասցըները:

Թեկի արենելյան մասում կան մի շարք սենյակներ, որոնց
պատերի մեջ կան անցքեր, սարքված կավե խորովակներով: Են-
թագրվում է, որ այսուել տեղափորված է եղել կաթողիկոսարա-
նի բաղնիքը:



Սրանց անսմիջապես մոտ, հարավային կողմից, կա միանեք մի բազիլիկ՝ արենելյան կողմում բարձրադիր սեղանի արսիկով։
Ինչպես Թորամանյանը, այնպես էլ մի քանի ուրիշ հետազոտողներ այն կարծիքն են հայտնել, որ այդ բազիլիկ եկեղեցին գոյություն է ունեցել Զվարթնոցի կառուցումից շատ առաջ։

Չնայած պահպանված պատմերի զգալի բարձրությանը, համարյա բոլոր սենյակներն էլ զուրկ են լուսամուտներից։ Այս հանգամանքը իրավունք է տալիս հնթաղրենու, որ սենյակների մեծ մասը լուսավորվում էր երթիկով։

Կաթողիկոսարանից մի փոքր հետու, նրա հարավարենեցան կողմում, պահպանվել են գինու մասների և հնձանների մասրդները։

Ներսես Յ-ըդ կաթողիկոսի պալատի մասցորդները խոսում են այդ պալատական շինության երբեմնի վեհության մասին, որն իր ճարտարապետական մտահղացմամբ, ճարտարապետական-գեղարվեստական որակով, անշուշտ համապատասխանում էր Զվարթնոց տաճարի հոյակապ ձևերին և նրա հետ մեկտեղ ստեղծում էր ներդաշնակորեն լուծվոծ ճարտարապետական մի անսամբլ։

ԹԱՆԳԱՐԱՆԸ

1927 թվից Զվարթնոցին կից գործում է հատուկ թանգարան, որն ոպատարվում է հուշարձանը այցելողներին։

Թանգարանում զլխավորապես ցուցադրված են պեղումների հետևանքով ստացված իրերը։ Բացի այդ, ցուցադրված են Զվարթնոցի և նրա տիպի այլ հուշարձանների գծագրեր ու լուսանկարներ։ Ցուցադրված են նաև հին և միջնադարյան հայաստանի պատմիչներից քաղաք Զվարթնոցին վերաբերող տեղեկությունները։

Թանգարանում ցուցադրված իրերի մեջ կան այնպիսիները, որոնք իրենց ծագմամբ անսիջական կազ չունեն Զվարթնոց հուշարձանի հետ։ Դրանք գտնվել են հուշարձանի տերիտորիայում կատարած պիղումների ժամանակ և անշուշտ վերաբերվում են ավելի վաղ ժամանակների կուլտուրային։ Օրինակ, այսպիսիներից են բազալտ քարի վրա քանդակված մի գաղանի պատեկեր և տուֆի երկու քար, որոնց վրա քանդակված օրնամենտները նման չեն Զվարթնոցի օրնամենտներին։

Այս տեսակետից, ի միջիայլոց, ամենահետաքրքրական հու-

շարձանը պետք է համարել կոթողը՝ Ուրարտական արձանազրությամբ, որը գտնվել է պեղումների ժամանակ Զվարթնոցի հարավարենմտյան մուտքի մոտ (այժմ գտնվում է Հոփիսիմելի տաճարում (նկ. 23)): Կոթողն ամբողջական բազալտ քարից է, որն ունի 2,70 մ բարձրություն, 0,63 մ լայնություն և 0,86 մ հաստություն: Նրա երեսի հղկած կողմում կա Ուրարտական թագավոր Արգիշտիի որդիի մուսա 2-րդի (685–675 մ. թ. ա.) 47 տողից բաղկացած ընդարձակ սեպազիր արձանազրությունը: Արձանազրությունում ասվում է Կուտուրլին երկրի նվաճման և Ռուսա 2-րդի կատարած խոշոր շինարարական աշխատանքների մասին «Կուտուրլինյան հարթավայրում» (հավանաբար խօսքը հրագդանի հովտի մասին է):

Արձանազրությունում ասվում է նույնպես խաղողի այգիները տնկելու, պտղատու ծառերի և ինչ որ ցանքսերի մասին: Ասվում է նույնպես Իլղառուրի գետից ջրանցք անցկացնելու և Խաչը, Թեյշերե և Արդու աստվածներին անառուններ գոհաբերելու մասին: Արձանազրությունը վերջանում է հուշաբանը քանդակներին ուղղված սովորական անեծքով:

Թանգարանում ցուցադրված մնացած բոլոր իրերը վերաբերվում են անմիջապես Զվարթնոց հուշաբանին: Նրանց մեջ կան մի շարք ճարտարապետական բեկորներ խճապատկերի (մուղագեկի) և որմեանկարների ֆրագմենտներ, սմալտաներ (խճապատկերի գույնգույն խորանարդիկներ), երկաթե իրեր, գույնգույն գլուխուրով պատած կազի առաններ, կարասներ, ծիփվածքի կտորներ, վրան պահպանված դանական լիդուններով արձանապրություններ և այլն:

Ցուցադրված էքսպոնատներից հատկապես հետաքրքրական է 1,26×1,26 մետր չափերով քարե սալի վրա փորագրված արեվ ժամացույցը (նկ. 24): Հին Հայաստանում այդպիսի ժամացույցն ուժով օգտվում էին օրվա ժամանակը որոշելու համար: Արևի ժամացույցի վրա կա սաղմոսից քաղած գրաբար մի ժակագրություն, որը հրավիրում է հավատացյալներին աղոթելու աստծուն, աղոթքի ժամերին:

Ալղաւթեսցեն առ տէր ամենայն ժամ ընդունելիս, — ասում է մակագրությունը:

Ուշադրության արժանի է Ներսես 3-րդի հունարեն գրած արձանագրությամբ մի քարի սալ. արձանազրությունն ասում է, «Կառուցել է Ներսեսը, հիշեցեք»: Արձանագրությունից վեր, մեջ-

տեղաւում, մի փաքը սալի վրա, քանդակված է հավասարակողմնասէ: Ամենայն հավանականությամբ այդ արձանագրությունն ամբացված է եղել տաճարի պատի մեջ:

Ներսիս Յ-րդ կաթողիկոսի անունը հիշատակված է նաև գամբրյուղանյոււս խոյակների խոյողների (ՅՈԼՅՈՒՏԻ) մեջտեղը գտնվող շրջանների մեջ, փակազգրերով: Խոյակի մի կողմի փակագիրն ընթերցվում է — «Ներսիս», իսկ մյոււս կողմինը — «Կաքոյիկուս»:


Եղբեկ նշված սալի, այնպիս էլ փակագիր հունարեն արձանագրությունները, հաստատում են Ներսիսի կողմից տաճարը կառուցելու ինչպիս և նրա հունասիր լինելու վերաբերյալ գոյություն ունեցող պատմական տեղեկությունները Սա եզակի գեղաք չէ, երբ քաղկեդոնական եկեղեցու կողմանակից և բյուզանդական օրինատացիա ունեցող հայ կաթողիկոսը, հունարեն արձանագրություն է թողնում: Հունարեն-հայերեն երկեղպվյան արձանագրությունը գտնված է Ավան գյուղում գտնվող տաճարի ավերակներում:

Թանգարանում ցուցադրված լուլոր էքսպոնատները զգալիորեն լրացնում են հուշարձանից ստացած ընդհանուր տպավորությունը: Հնարավորությունն են տալիս պատկերացնելու ճարտարապետության հարակից բնադրավառի, Հայաստանի այն ժամանակաշրջանի արվեստների մասին, երբ կանգնեցվել է Զվարթնոց տաճարը:


* * *

Զվարթնոցի ավերակները զիտելուց հետո էքսկուրսանուները Հայկական ճարտարապետության վերաբերյալ իրենց տպավորությունները ավելի հարստացնելու և լրացնելու համար կարող են շարունակել ճանապարհը զեպի հջմիածին, հին Հայաստանի կարևորագույն կենտրոններից մեկը — Վաղարշապատ քաղաքը, հիմնված Վաղարշ թագավորի (117—140 թ. մ. թ.) ժամանակուն:


Այստեղ գտնվում են ևս մի քանի կարևոր ճարտարապետական հուշարձաններ, ինչպիսիք են հջմիածնի մայր տաճարը (5-րդ դար), Հոփիսիմեի (618 թ.), Գոյանեի (630 թ.) և Շողակաթի (1694 թ.) տաճարները:



Նկ. 1. Զվարքնոցի ընդհանուր հատակագիծը




Նկ. 2. Զվարքնոց տաճարի հատակագիծը



Ալ. 3. Զվարդոց տաճարի հյուսիսական կիսուաշխած պրոմա-
շտի խորինքը

նկ. 4. Զետրինց. գամբուղան խնամք






Նկ. 5. Գվարնոց. մույրերի մնացորդներ

Հիմնալիույթի կազմակերպություն





Ալ. 7. Զվարենցի բնդիանուր տեսքը (ճարտ. թ. Թորամանյանի
վերակազմությամբ)




Նկ. 8. Զվարքոց. տաճարի արտաքին կիսայուները

Ալ. 9. Զլարպնց. կամարավեղի քիոր




Տարածությունը գումար կլին կազմության առ առ առ առ






Նկ. 11. Կամարադեղների միջև եղած քանդակներից

Ապ. 12. Զվարդաց. կառուցողին բարձրացնելու համար




Ակ. 13. Զվարդաց. կասոնի մեջ բարձրացած պատճեններից






Նկ. 14. Զվարքնոց. կլոր լուսամուտների շրջանակի բեկոր

նկ. 15. Զվարբնոց. Կլոր լուսամոտենի շրջանակի բեկոր





Նկ. 16. Զվարճաց. Ժիշտ բեկու

87




Արդյունաբանական գլուխքի պահպան






Նկ. 18. Անի. Գագկաշենի հատակագիծը

Եկ. 19. Ալի. Պատկանական սլուղեր







Նկ. 20. Յանայի տաճարի հատակագիծը




Նկ. 21. Բանայի տաճարի ներքին տեսքը

Նկ. 22. Զետրնոց, կարողիկոսարանի ավերակների ընդհանուր
տեսքը





Նլ. 23. Զվարքնոց տաճարի պեղումների ժամանակ գտնված ուշատական սեպազիր արձանագրությունը (այժմ գտնվում է Հռիփսիմեի տաճարում)



Նկ. 24. Զվարենցի արևի ժամացույցը



Տեսնձնվոծ է արտադրության 5/VIII 1947 թ. սառցագրված է տպագր. 20/XI
1947 թ. Վճ 04106 պատ. № 618, հրատ. № 448, տիբաժ 1500, տպ. 11/₁ մամաչ/
+ 24 նկար, մեկ մամուլաժ 38,400 տպ. նիշ.

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տպարան, Երևան, Աբովյան 104

1998 թվական 3 խոյժապահ Ար Հայ ԱՄՎ Հայոց պատրիարք է հայոց
աթոռի 10 առ 1998 հային Ար Առաջ ԱՄՎ Հայոց պատրիարք է հայոց
պատրիարք է հայոց պատրիարք է հայոց պատրիարք է հայոց պատրիարք է

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220034611

(504)

ԳԻՒԾ 5 Ռ.

